

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵԲԵՆԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 33 ՊԵԿ-ԳՅԾԶԲ-2022/17-1**

ք.Երևան

«18» 01 2023թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՆԱՆԴԱ>> ՍՊԸ - ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Սողոյան ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն Էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն Էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Զննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում երկու կողմից պաշտոնապես հաստատված ծառայության մատուցման օրը:

6 (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 13700000 (տասներեք միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետով կնքվելից համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի 7.15 կետով կնքվելից համաձայնագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{20.1}:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQ = UQ/L \cdot Qx \cdot D$, որտեղ՝

VQ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

UQ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

LQ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

D-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

D-ն մատուցված ծառայության քանակն է:²⁰

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը

²⁰ Կատարողի կողմից հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» չՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունները չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (ինսայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագրի կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուլյար

Է. Գևորգյան



ԿԱՏԱՐՈՂ

<<ԱՆԱՆԴԱ>> ՍՊԸ
010 22 68 35
ք.Երևան, Կիկյան12ա
Կոնվերս Բանկ ՓԲԸ
ՀՀ 1930000613360100
ՀՎՀՀ 05009869

Գ.Սողոյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

h/h	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)՝ ըստ չափաբաժինների		
		1-ին չափ.	5-րդ չափ.	11-րդ չափ.
		Տոյոտա Պրադո 4.0 /2015, 2018թ/	Միցուբիշի L-200 2.5TD, /2011, 2013, 2015թ/	Տոյոտա Կորոլա 1.3, 1.4, 1.6 /2010, 2011թ/
	CPV	50111170/518	50111170/522	50111170/528
1	2	3	7	13
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները			
1	Բռնկման համակարգի ստուգում	2,000	2,000	2,000
2	Սառեցման համակարգի ստուգում	2,000	2,000	2,000
3	Յուղման համակարգի ստուգում	2,000	2,000	2,000
4	Արտաժման համակարգի ստուգում	2,000	2,000	2,000
5	Կցորդման համակարգի ստուգում	2,000	2,000	2,000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	2,000	2,000	2,000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	2,000	2,000	2,000
8	Կրադանային փոխանցման տուևիի ստուգում	2,000	2,000	2,000
9	Բաշխիչ տուևիի աշխատանքի ստուգում	2,000	2,000	
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	2,000	2,000	2,000
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	2,000	2,000	2,000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	2,000	2,000	2,000
13	ABS համակարգի ստուգում	2,000	2,000	2,000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	2,000	2,000	2,000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	2,000	2,000	2,000
16	Թափքի վիճակի ստուգում	2,000	2,000	2,000
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	2,000	2,000	2,000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները			
	1. Շարժիչ			
1	Շարժիչի հանում և տեղադրում	50,000	60,000	40,000
2	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	190,000	150,000	160,000
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	8,000	8,000	6,000
4	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000
5	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	37,000	35,000	25,000
6	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	20,000	20,000	20,000
7	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և	3,000	3,000	3,000

8	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3,000	3,000	3,000
9	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	1,000	1,000	1,000
10	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	1,000	1,000	1,000
11	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	3,000	3,000	3,000
12	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	20,000	20,000	20,000
13	Ծնկաձև լիսեռի հղկում	20,000	20,000	20,000
14	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000
15	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	15,000	15,000	15,000
16	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	5,000	5,000	5,000
17	Ծնկաձև լիսեռի ուղղում	13,000	13,000	13,000
18	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7,000	7,000	7,000
19	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	15,000	15,000	15,000
20	Շարժիչի բլոկի փոխարինում	75,000	70,000	75,000
21	Շարժիչի գլանի փոխարինում (гидрошка)	15,000	15,000	15,000
22	Մխոցի փոխարինում 1 հատ	15,000	15,000	15,000
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000	25,000
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
25	Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում	2,000	2,000	2,000
26	Փոկանիվի փոխարինում	2,000	2,000	2,000
27	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում		30,000	
28	Շարժիչի շղթայի փոխարինում	40,000	40,000	40,000
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	2,000	2,000	2,000
30	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	2,000	2,000	2,000
31	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	7,500	7,500	7,500
32	Շարժիչի յուղի մղիչի փոխանակում	15,000	15,000	15,000
33	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	5,000	5,000	5,000
34	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	2,000	2,000	2,000
35	Յուղի ծորակի փոխարինում	2,000	2,000	2,000
36	Օդաքաշակ փողրակի փոխարինում	2,000	2,000	2,000
37	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000
38	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	15,000	15,000	15,000
39	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000	25,000
40	Շարժիչի կափույրի փոխարինում	15,000	15,000	15,000
41	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	15,000	15,000	15,000
42	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	15,000	15,000	15,000
43	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	15,000	15,000	15,000
44	Շարժիչի բաշխիչ լիսեռի եռաթևի փոխարինում	7,000	7,000	7,000

45	Ատամնասկիլի փոխարինում	4,000	4,000	4,000
46	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում		12,000	
47	Սուխարիկի փոխարինում 1 կ-տ	7,000	7,000	7,000
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	13,000	13,000	13,000
49	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	5,000	5,000	5,000
50	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	2,500	2,500	2,500
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	7,500	7,500	7,500
52	Շարժիչի յուղի արանքաչափի (RSS) իրանի փոխարինում	2,000	2,000	2,000
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	8,000	8,000	8,000
54	Շարժիչի գամասեղի փոխարինում	1,500	1,500	1,500
55	Գլխիկի հեղույսի փոխարինում	1,500	1,500	1,500
56	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	1,500	1,500	1,500
57	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	26,000	26,000	26,000
58	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	15,000	15,000	15,000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
59	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1,000	1,000	1,000
60	Ավտոմեքենայի յուղում	1,000	1,000	1,000
61	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	4,000	4,000	4,000
62	Յուղի պոմպի փոխարինում	22,000	15,000	22,000
63	Յուղի ռադիատորի փոխարինում	15,000	15,000	15,000
64	Յուղի ռադիատորի նորոգում	5,000	5,000	5,000
65	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	25,000	10,000	25,000
66	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	10,000	10,000	10,000
67	Վառուցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2,000	2,000	2,000
68	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	7,000	7,000	7,000
69	Օդի զտիչի փոխարինում	1,000	1,000	1,000
70	Սրահի օդի զտիչի փոխարինում	2,000	2,000	2,000
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000	9,000
72	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	2,500	2,500	2,500
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	4,000	4,000	4,000
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	4,000	4,000	4,000
75	Բոցամուղի կողավորում	7,000	7,000	7,000
76	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	2,500	2,500	2,500
77	Բենզամղիչի փոխարինում	5,000	5,000	5,000
78	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	5,000	5,000	5,000
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000

81	CO կարգավորում	5,000	5,000	5,000
82	Դեկավարման բյուկի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000	20,000
83	Դեկավարման բյուկի վերանորոգում	25,000	25,000	25,000
84	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000
85	Վառելիքի բաքի մաքրում	7,500	7,500	7,500
86	Օդի ծախսի տվիչի փոխարինում	5,000	5,000	5,000
87	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	5,000	5,000	5,000
88	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	5,000	5,000	5,000
89	Բենզոբաքի բենզամոդիչի ցանցի փոխարինում	5,000	5,000	5,000
90	Բենզոբաքի բենզամոդիչի ցանցի մաքրում	2,000	2,000	2,000
91	Ցուղի ճնշման տվիչի փոխարինում	5,000	5,000	5,000
92	Տվիչի փոխարինում	5,000	5,000	5,000
	3. Սառեցման և արտածման համակարգ			
93	Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	10,000	10,000
94	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
95	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000
96	Ռադիատորի նորոգում	15,000	15,000	15,000
97	Շերտափեղկի փոխարինում	10,000	10,000	10,000
98	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	5,000	5,000	5,000
99	Ընդարձակող բաքի փոխարինում	2,000	2,000	2,000
100	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	2,000	2,000	2,000
101	Ջրի ծորակի փոխարինում	5,000	5,000	5,000
102	Հովացման համակարգի ռետիսե փողրակի փոխարինում	5,000	5,000	5,000
103	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000
104	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	35,000	30,000	30,000
105	Վառարանի ռադիատորի նորոգում	20,000	20,000	20,000
106	Վառարանի շարժիչի փոխարինում	20,000	20,000	20,000
107	Թերմոստատի փոխարինում	5,000	5,000	5,000
108	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	25,000	25,000	25,000
109	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	5,000	5,000	5,000
110	Գեներատորի փոկի փոխարինում	10,000	10,000	10,000
111	Գեներատորի փոկի ձգող հղովակի փոխարինում	10,000	8,000	8,000
112	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	8,000	8,000
113	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10,000	10,000	10,000
114	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1,000	1,000	1,000
115	Խլարարի ներդիրի փոխարինում	5,000	5,000	5,000
116	Խլարարի կախոցի փոխարինում	2,000	2,000	2,000

	4. Կցորդում և ՓՏ			
118	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000	25,000
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	25,000	25,000	25,000
120	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում		35,000	35,000
121	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում		15,000	15,000
122	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում		15,000	15,000
123	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում		15,000	15,000
124	Կցորդման երկփանիի փոխարինում		15,000	15,000
125	ՓՏ-ի հիմնական նորոգում		140,000	135,000
126	ԱՓՏ-ի հիմնական նորոգում	180,000		150,000
127	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում		35,000	35,000
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում		15,000	15,000
129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում		15,000	15,000
130	ՓՏ-ի հանում և տեղադրում		40,000	40,000
131	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	65,000		65,000
132	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	15,000	15,000	15,000
133	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	25,000	25,000	25,000
134	ՓՏ-ի ատամնակի փոխարինում	25,000	25,000	25,000
135	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	25,000	25,000	25,000
136	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	25,000	25,000	25,000
137	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	35,000	35,000	35,000
138	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	15,000	15,000	15,000
139	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	13,500	13,500	13,500
140	ՓՏ-ի յուղի փոխարինում	5,000	5,000	5,000
141	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	25,000		25,000
142	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	80,000		80,000
143	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	70,000		70,000
144	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	5,000	5,000	5,000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
145	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	150,000	100,000	
146	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	50,000	50,000	
147	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	25,000	50,000	
148	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	20,000	25,000	
149	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	20,000	20,000	
150	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	20,000	20,000	
151	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	25,000	20,000	

153	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	25,000	25,000	
154	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	25,000	25,000	
155	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	25,000	25,000	
156	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	5,000	25,000	
157	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	15,000	5,000	
158	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	15,000	
159	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	20,000	25,000	
160	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	20,000	
161	Տվիչի փոխարինում	5,000	15,000	
162	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	15,000	5,000	
163	Կարդանային լիսեռի միջին կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	15,000	
	6. Առջևի և հետևի կամրջակներ			
164	Առջևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	18,000	15,000
165	Առջևի կամրջակի կիսաստնում առանցքակալի փոխարինում	15,000	13,000	13,000
166	Առջևի կամրջակի կիսաստնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000	5,000
167	Կամրջակի յուղի փոխարինում	5,000	5,000	5,000
168	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	45,000	35,000	38,000
169	Հետևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	18,000	
170	Հետևի կամրջակի կիսաստնում առանցքակալի փոխարինում	15,000	13,000	
171	Հետևի կամրջակի կիսաստնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000	
172	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	
173	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	25,000	25,000	
174	Հետևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում	80,000	50,000	
175	Կամրջակի տվիչի փոխարինում	5,000	5,000	5,000
	7. Կախոց			
176	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	50,000	45,000	40,000
177	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	18,000	12,000	14,000
178	Առջևի անվակունդի առանցքակալների փոխարինում	15,000	15,000	13,000
179	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	13,000
180	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	13,000
181	Հետևի անվակունդի առանցքակալների փոխարինում	15,000	15,000	13,000
182	Անվակունդի համասեղի և հեղույսի փոխարինում (մեկ անիվի համար)	4,000	4,000	4,000
183	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	8,000	8,000	8,000
184	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	15,000	15,000	13,000
185	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում			

186	Առջևի զսպանակի փոխարինում	6,000	6,000	6,000
187	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	8,000	8,000
188	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	4,000	4,000	4,000
189	Ներքին լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	10,000	10,000
190	Ներքևի լիակի վռանների փոխարինում 1 հատ	7,000	6,000	7,000
191	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	2,000	2,000	2,000
